

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Ներկայ 1897 տարեդրամի Պոչկարիոյ համար տարեկան 10ֆր " " " 1/2 " 5 " Սրտասահմանի համար " 12 " " " " 1/2 " 6 " " կանխիկ վճարելի	Համակ դրամ եռյուրե խորկո հետեւեալ հասցեով ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԻՐԱՎՈՒՆԿ ԼՐԱԳԻՐ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ Редакция на вѣстникъ „Иравункъ“ ВАРНА (България).	Rédaction du journal „Iravounk“ VARNA (Bulgarie).	Խմբագրութեան նշողական գործիչնք ետ չեն դրկո՞ւր եւ յարմար դատ- ութեանը միայն կը հրատարակ- ուին ամբողջովին կամ մասամբ։ Շաբաթականը տողը 20 սանթիմ. երեքէն աւելի անգամներու համար 20 աւ 100 գեղջ կը լինի։
---	---	--	--

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՒ ԱԶԱՏԱԿԱՆ

Չորժնական կեանքի առօրեայ խնդիրներով միայն զբաղած միտքեր, որքան ալ զօրաւոր ու հասուն ըլլան, կը մոռնան բնականաւոր սա ճշմարտութիւնը թէ մարդկային ընկերութեան ամենէն զլխաւոր հաստատութիւնները հիմնուած են ժողովուրդներու փոխ-սփոյալական-բարոյական տեսութեանց եւ գաղափարներու վրայ։ Մեր նիւթապաշտ ժամանակին շահագէտ ոգին, որով տոգորուած են ազգերը զեկամարելու կոչուած պետական մարդիկ, որքան ալ իր սոհմանափակ շրջանակին մէջ գերած ու կաշկանդած ըլլայ արդի քրիստոնեայ կառավարութիւնները եւ իրենց արբանեակ դրամատէր գաղափարը, որոնք իրենց զինուորական ուժին կոթնած կերելակային սուրի եւ սուրին զօրութեամբ կանգուն պահել արդի ընկերական եւ պետական գրութիւնները, կանխակալ մտածումներու պտորութիւններէ զերծ, ազատախոհ եւ լայն միտք՝ չեն կրնար վայրկեան մը իսկ տարակուսել թէ ընկերական բարձրագոյն խնդիրներու մէջ վերջին խօսքը ժողովուրդներու խորհելու եւ գաղափարելու կերպին, անոնց բարոյական սկզբունքներուն եւ գաղափարներուն է. ասոնց փոփոխութիւնը, ի բարին ըլլայ թէ ի չարին, անխուսափելի կերպով, ուշ կամ կանուխ, կունենայ իր հակահարուածը տիրող օրէնքներուն եւ կարգերուն վրայ, որոնք ալ ճակատագրապէս դատապարտուած կըլլան յեղափոխութեան։

Ժողովրդային գաղափարներու հիմնական փոփոխութիւնները, ինչպէս պատմութեան ուսումնասիրութիւնը կը ցուցնէ, զլխաւորապէս ծագում կանեն ասին զիջածութիւնէն, որոնց մէջ կիցնան տիրող ու վարող տարրերը՝ փառքի, դրամի եւ ազգեցութեան աւատութեամբ ապականելով։

Չիղճումները պարզամիտ ժողովրդին աչքերը կը բանտն եւնա տեսնելով որ անբարոյականութիւն

կը տիրէ հանրային գործերու վարչութեան մէջ, կը կորսնցնէ իր հաւատքը հաստատեալ կարգադրութեանց եւ ուղղութեան վրայ, զորս փոփոխելու հարկը հետզհետէ աւելի ստիպողապէս կը զգայ։

Եւրոպայի կառավարական արդի գրութիւնը, կամ սահմանադրական վարչութիւնը իր գոյութիւնը կը պարտի Ֆրանսայի Մեծ Յեղափոխութեան, որմէ ժառանգած է ազատական սկզբունքներ, կամ գէթ, ինչ որ այս անունով կը կոչուի այսօր։ Պատմական հանգամանքներու անհրաժեշտ բերմամբ այդ սկզբունքներուն հետ խառնուած են նաեւ քրիստոնեական կրօնի ազգեցութիւնն ու կարգ մը պատուիրանները եւ այս խառնուրդը եւրոպական կառավարութեանց կուտայ քրիստոնեայ-ազատական վարչութեան մը գերունքը։

Այսպէս կը պահանջէր զարգացման այն վիճակը, խորհելու այն աստիճանը ուր եւրոպացի ժողովուրդները կը գտնուէին 1793էն ետքը։

Քրիստոնեայ եւ ազատական պետութիւնները իրենց ծննդեան թուականէն ի վեր իրարու հետ շահագիտական ծայրայեղ մրցման մը բռնուկով այնքան յառաջ գընացին այս սոսկալի պայքարին մէջ, որ այսօր ալ բոլորովին հեռացած կերեւին իրենց ծնունդ տուող բարոյական պայմաններէն, քրիստոնէութենէ եւ ազատական սկզբունքներէ, որոնք ալ պետական մարդերու խօսքերուն մէջ միայն արձագանգ կը գտնեն, իսկ իրենց գործերուն եւ ուղղութեան մէջ՝ բնաւ երբէք. հակասութիւնը աշխերեւ է եւ կեղծիքը բացարձակ։

Եւրոպայի վարչական կազմակերպութիւնը դադարած է, այո՛, քրիստոնեայ եւ ազատական լինելէ. ինչ քրիստոնէութիւն կը մնայ արդարեւ հոն, ուր արդարանալի գործ մը կը համարուի եւ իշխական շահերու նկատողութիւններով ներել որ քրիստոնէութեան մեծագոյն թշնամին հրով եւ սրով քրիստոնեաները ջնջելու աշխատի հա-

յաստանի մէջ, մինչդեռ Քրիստոս կը պատուիրէ իրեն հաեւողնեւ լուն իրենց երկու շապիկին մէկը տալ ուրիշին, երբ սա ատոր կը կարօտի։ Ֆրանսական յեղափոխութեան ազատական ոգին հետք մը իսկ կրնայ մնացած ըլլալ հոն, ուր ներքի կը նկատուի շահագիտական հաշիւներով աշակցիլ թուրք բարբարոս կառավարութեան՝ զուլեւ իրենց ազատութեան համար արին թափող ապստամբ քրիստոնեաները, կամ, մինակ թողուլ Յունաստան այն կուրին մէջ զոր կը մղէ իր ազգակիցներու ազատութեան համար թուրքիոյ դէմ եւ մինչեւ իսկ օգնել այս իսլամ բռնապետութեան։

Այս ահագին զեղծումները միանգամ ընդ միշտ կը հաստատեն թէ քրիստոնէութիւն եւ ազատականութիւն անսկիսելի են քրիստոնեայ մարդկութեան ճակատագրի վարող բարձր գաղափարին մէջ։

Աշխարհ կը տեսնէ անկումը եւ եւրոպական ժողովուրդները բընադրմամբ կը զգան ու իրենց լաւագոյն զաւակներուն բերնով կը յայտարարեն թէ նիւթական շահը այսօր կը յաղթանակէ մարդկութեան մեծագոյն շահեւուն, իր ամենէն գեղեցիկ զգացումներուն, իր մտաւարարներուն, իր բարոյականութեան, որոնք բարձրագոյն իմացականութեան մը հետ խափը կը կազմեն իր եւ իրենց նիւթական շահին համար լեռներու մէջ զիրար բզբտող գաղափարներու միջեւ։

Այս գիտակցութիւնը եւրոպայի մէջ ամենէն աւելի զարթուցին հայերը եւ Յոյները իրենց ահաւոր նիւթական ու բարոյական զոհարումով, զոր տուին թուրք վայրագութեան։

Մարդկութեան այսպիսի կարեւոր ծառայութիւն մը մատուցած ըլլալու գոհունակութիւնը միւլթարութիւն մըն է մեր ներկայ անմիջական վիճակին մէջ։

ՈՐԲԵՐՈՒ ԽՆԴԻՐԸ

Մեզ համար օրուան կարեւորագոյն խնդիրն է հայ լքուած որբութիւնը։ Պոչկոյ մամուլը բոլորի ազալակներ կը բարձրացունէ այն անազնիւ, կրնայ ըսուիլ, այն անարգ եղանակին դէմ՝ որով օտարազգի կարգ մը բարեարներ կը վերաբերուին մեր անթիկունք որբերուն հանգէպ։

Մեր վերջին թերթերէն մէկուն մէջ արտատպելով հրատարակեցինք թիւն այն թշուառ էակներուն որոնք առանց հօր եւ առանց ամուսնի մնացած էին Հայաստանի զանազան գաւառներուն մէջ, թրքական անմոռաց գաղանու թիւններուն հետեւեալ։

Այս արիւնտ վիճակագիրը ցոյց կուտայ թէ 15644 որբեր կամ այրիներ կան, որոնք անյապաղ նպաստի ու պաշտպանութեան կարօտ են. վարանում մը, անփութութիւն մը, եւ ահա այս բողբոսութիւն հայորդիները պիտի կորսուին այս անգամ չէ թէ հըրէշ գահիճներու հարուածներովը, հապա թշուառութեան, լքման երեսէն։

Ֆնական է որ այսքան համատարած չքաւորութեան մը դարմանը միմիայն մենէ չսպասուիր. մինչեւ որ օտար ողորմածութիւնը ձեռք չի կարկառէ, մենք մեզի անկարող ենք սփոփարար արդիւնք մը ձեռք բերել։ Ճշմարիտ է սակայն որ եթէ մեր մէջ գտնուած հարուստները հայրենասիրական փոքր թափ մը արտայայտեն, օտարներուն իյնալու պէտք չենք ունենար։ Երեսներն ճերմակ մնայ։

Հիմա իրողութիւնը այս է թէ արտասահմանի խորքերէն ու գաւառներու չորս անկիւններէն սըրտածմիկ ճիւղեր կը լսուին։ Մեր որբերը կը հեծնեն օտար մարդասէրներու կրօնական հալածումին ներքեւ։

Ամբողջ գաւաղութիւն մը կազմուած է կարծես հայութիւնը ոչնչացնելու համար։ Անգլիացի բողբոսական միսիոնարը, անկեղծ քարոզիչ աւետարանի սկզբունք-

ներուն, կըսէ հայ որբին. «պատառ մը հաց կուտամ՝ քեզ, բայց նախնեացդ գաւառնա՛քը փութէ՛»։

Իրեն կը ձայնակցին ամերիկացի միսինարներն ալ։ Հայր Շարմրթան եւս նոյն երգը կ'երգէ։ Թուրքը ամեն ատենէ աւելի եւս անգեղամբ խաղաղութեան կը հըրաւիրէ իր անհաւատարիմ հայ հպատակները, այս անգամ համազական միջոցներով։

Գերմանիայ մէջ հայ որբերուն կըսէ պատիւը անցեալ օրուան նամակով հասկցանք։ Պատմութիւնը կըսէ թէ գերմաններուն ծագումը բարբարոսական է։ Կեւելայ թէ հին վանդալական այս բարբերը տակաւին անհետացած չեն վիլհէլմ Բ.ի սիրուն գաւազներուն վրայէն, որոնք չեն ամբշնար հայ որբը կառքին լծելու և կոշտ վարմունքներով զայն շարձըրկելու։

Ասանկ կըլլայ մարգասիրութիւնը. աւետարանը ասանկ կը քարոզէ։ Ի՞նչ կուզեն այս մարդիկ մեր կրօնքէն, ամենէն հինը ու ամենէն հարազատը։ Չեն գիտիր որ մենք մեր եկեղեցիովը կրցած ենք ապրիլ մինչեւ այս տասնըիններորդ դարուն վերջերը, ու ասկէց ետքն ալ անոր անուշ և կենսաւետ շուքին տակ պիտի ապրինք։ Մեզի մեր պապերուն դաւանութենէն հեռացնելու համար զանազան ժամանակներու մէջ կըսած հզօր փորձերու ապարդիւն ելքը բաւական ապացոյց մը չէ՝ այս մարդորսներուն թէ հայը կը սիրէ իր եկեղեցին, իր պաշտամունքը, իր կրօնական սովորութիւնները։

Ի՞նչ անուն կուտան այն ընթացքին որ խուճ փաթը տղաքնեւ բուս անփորձութենէն ու միամըտութենէն կուզէ օգտուիլ։ Փոխանակ անկեղծօրէն զիտուլ տղգի մը արիւնդուայ վիճակին, աւսիկայ պատեհ առիթ նկատել կըրօնապէս ոչնչացնելու զայն։ Չէ, Քրիստոս ասանկ բան չի քարոզել։ Քրիստոսն է վայել ընթացք չէ այս։

Ի՞նչ կը մնայ ուրեմն ընել մեզ։ Մէկ կողմէն չենք կրնար հրաժարիլ օտար բարեգործութենէն, վասն զի մեծապէս կարօտ ենք աւոր։ միւս կողմէ չենք ալ ուզիր ենթարկուիլ կրօնական անորակելի շահագործումներու։ Չարիքի մը առաջին աստիճան համար ուրիշ չարիքի մը ենթարկուիլ անմտութիւն է։ Հետեւապէս հարկ է հետք մը մտածել։ Անհատական ձեռնարկները չեն կրնար և և է արդիւնք ձեռք բերել։ Մեր կրօնական կամ բարեբախտ իշխանութեանց կիսայ բռնիկ ուղղութիւն մը որով օտար միտք նարները կամ բարեգործական հաստատութիւնները ստիպուին իրենց յանձնուած որբերուն տալ կրթութիւն մը որ լոկ ազգային

գրոշմ ունենայ, ու չձգաի կրօնական ազգային մարմինը։

Մեր Պաշտոյ թղթակցին ըսածին նայելով, Պատրիարքարանը որբերու դործին մէջ շատ թող վարմունք մը կը պահէ. կամ թէ իր ձեռք առած միջոցները շատ անգօր են նպատաւոր արդիւնք մը ունենալու։ Ահա մեր ազգային իշխանութեան յետին գործունէութիւնը այսքան փափուկ ու կենսական պարագայի մը մէջ։ Եթէ չի կրնար բարեբախտապէս ազգին օգտակար ընթացք մը ունենալ, գոնէ հեռուէն կամ մտէն մեր տարագիր որբութեան վրայ մանրազնիւ հակողութիւն մը ի գործ դնէ, որպէս զի կրօնքի զօշաքաղներ մեր ապագայ ս'րունդին բողբոջները իրենց ծրարած կուսին մէջ չխամրեցնեն։

Կրնան նաեւ կատարուիլ հաւաքական գիմունքի Մեզիկոյ, Գերմանիոյ, Ամերիկայի այն բարեգործական ընկերութեանց վրին մարմիններուն, որոնք ուղիմ յանձն առած են հայ որբերուն խնամածութիւնը, խնդրել անոնցմէ որ տոհմային — կրօնական զգացումները վառ պահուին այդ էականներուն օրտին մէջ, յիշեցնել վանոնց ձեռնարկութեան բուն նպատակը, որ է պատասխարիլ, սընտցանել, հազուեցնել և կրթել միայն հայ տղաքը։ Լրագրութիւնն ալ իր կողմէ կրնայ բաւական զօրաւոր խթան մը ըլլայ միշտ արթուն պահելու համար ազգը՝ իր հեռաւոր հէք որբերուն վիճակին վրայ։

Վերջապէս գիմունք, ձեռնարկ, ազգու միջոցներ անխնայ կատարուելու են, որպէս զի թէ՛ օտարները չզղանան իրենց անհրաժեշտ աջակցութիւնը մեր բարացած մանկութեան, և թէ՛ այս վերջինը կարտեսան վիճել չերթայ յաւետ։

Ե.

ՆՊԱՍՏ

Մէկ քանի օր առաջ «Հայ Բեղ» Դաշնակցութեան Պաշտօնական Կեդրոնական Կոմիտէին» կողմէ Թուրքիկ թերթ մը հրապարակ ելու, ծանուցանելով հասարակութեան թէ Պաշտօնական կարգ մը հայեր գրական նպատակներ առած են իրենց գիմունք թուրք հիւպատոսին... չէ թէ Հայաստանի մէջ անօթութենէ և թշուառութենէ մեռնող իրենց խեղճ եղբայրներուն համար հապա այն օսմանցի վերաւոր զինուորներուն օրոնք գացին հիշէնը ջարդելու և որոնք գուցէ 95ին մասնակցած էին նաեւ Հայաստանի անկուր կոտորածներուն։

Կը տեսնէք որ այս հայերը շատ վեհանքն են և մանաւանդ անյիշալար։ Ճիշդ Աւետարանի պատուիրանքին կը հետեւին. բայց աշ-

խարհի ո՛ր կողմն երթան, ասանկ առաքինութիւն չես կրնար գտնել։ Փոխանակ ձգելու որ մեր ազգին արիւնը, հիւթը ծծող հրէշներուն վէրքերը թարթխանան, ասանք կեղան բալտան կը գնեն անոնց վրայ, որպէս զի աղէկնան ու նորէն սկսին իրենց վաշխնական շահատակութիւններուն։

Այս նպատակ ընդունելով թերեւս առարկին թէ իրենք ստիպուած էին այդ զոհողութիւնը ընել՝ շահու ահապէտով իրենց գիրքը չփոխեցնելու համար։

Սակայն այս փաստը փոխանակ իրենց ընթացքն արգարացնելու, աւելի կը ծանրացնէ։ Ուրեմն բարոյական անկման այն աստիճանին հասնել ենք ուր՝ նիւթական գծու շահի համար՝ ոտքերնուս տակը պիտի առնենք մ'ը ազգին պատիւը, նախատելով մեր հարկը հաշարաւոր նահատակներուն սղաւի յիշատակը։

Տոհմային նպատակ։ Եւ այսպիսի երկրի մը մէջ ուր չիկայ տնոր լուծին հեղձուցիչ ծանրութիւնը, ուր մարդ կը վայելէ իր ընթացքին ազատ շարժումը։

Այն մարդիկ որոնք օգնեցին թուրք վիրաւոր զինուորին, իբրեւ հայ ի՞նչ պիտի ընեն ուրեմն բուլղովին վէրքերով ծածկուած իրենց եղբայրներուն համար որոնք թշուառութեան ճիւղներուն մէջ կը հեծնեն, ոգեւապառ ու մահամերձ։ Թուրք զինուորին նուիրուած դրամով արդեօք ո՛րքան հայ մերկութիւններ պիտի ծածկուէին, և անօթութիւններ անհետանային։

Սըտեղ, մ'ը աչքին առջեւ, վառնայի մէջ սրտածմլիկ ցուցահանգէս մը կոյ թշուառութեան։ Չգեղ տարիկա որ շարունակէ իր ընթացքը՝ աղէտալի վաճառի մը յանգելու համար, ու փառ զրկել հեռաւոր թուրք զինուորին՝ վերակապ հիւսելու համար անոր, աւսիկա հայ քրիստոնէի գործ չէ, պարզապէս անօրէնութիւն է։ Ի՞նչ խղճմանք պէտք է տակաւու համար այսպիսի արարքէ մը ծնելիք խղճի խայթերուն։ Յետին հայուն վրայ իսկ ազգային արժանապատուութիւնը այսչափ ուժգին անկուծ չի կրնար կրած ըլլալ։

Եւ անոնք որ այս մեղքը գործեցին, ի՞նչ միջոցներով պիտի փութան գոնէ մասամբ քաշել զայն. իրենց ճմուռը խեղճ հանգարանեցնելու համար համեմատական ի՞նչ զոհողութիւն մը պէտք է ընեն իրենց ջքաւոր եղբայրներուն վիճակին սիւփմանը։ Առիթը կը ներկայանայ իրենց։ Անցեալ օր ծանուցինք թէ Օր. Ֆրէյլըրի մեկնումով վառնայի գաղթականներէն մօտ 100 ընտանիք առուր հոցի կարօտ կը մնան. ուստի տեղական յանձնաժողովը նոր աջակցներով զօրացած՝ պիտի փութայ նոր հանգանակութեամբ գոնէ հաց ճարել այս թշուառներուն։

Տոհմային վիրաւոր զինուորներուն

նպատակ զրկող մեր հայ եղբայրներուն համար ձեռքէ չփախցնելիք առիթն է իրենց տգեղ արարքը քիչ մը մեղմացնելու դրամական արտասովոր զոհողութեամբ մը։

ԹՈՒՐԷԻԱ ԵՒ ՊՈՒԼԱՐԻԱ

Թուրք և յունական պատերազմին դադարումով խաղաղութիւնը չէ հաստատուած պայքանեան ցամաքակղզիին մէջ։ Ընդհակառակն, աւելի քան երբէք իրաց վիճակն յոյժ սպառնալից է։

Սրաւնաւարտի Կ. Պոլսոյ թըլթակիցը կը հաստատէ այն լուրը թէ Արեւելեան-Բուլղարի խեղդը կը սպառնայ կիսաւտել կապութեան դժուարութիւնները։

«Յոյժ վաւերական աղբիւրէ կիսանամ թէ, կըսէ սոյն թղթական կիցը, մեծ եպարքոսը խորհուրդ տուեր է Սուլթանին ետ առնել այն ֆէրմանը որով Ֆէրատնանտ իշխան կառավարիչ կարգուած է Արեւելեան-Բուլղարի և անոր տեղ թուրք բաշա մը կարգել, իբրեւ արգարացում՝ այս առաջարկին եւ պարքոսը կը յայտնէ Ֆէրատնանտ իշխանին կառավարիչ ընթացքը վերջին դէպքերուն մէջ։ Նոյնպէս գիտեմ թէ պուլկար կառավարութիւնը մտադիր է առաջարկել ի մօտայ գրան որ Սակեդոնիան ինքնօրէն նահանգի վերածուի։»

Դուռը, որ մինչեւ ցարդ Պուլկարի ուղած արտօնութիւնները տալու երեւոյթ ունէր, այլեւս խոստմնալանց ըլլալ կուզէ, Սահեդոնիոյ մէջ իր բանակը կեդրոնացած ըլլալով։ Արգարեւ կը ծանուցուի թէ եպարքոսը մտադիր է ուշացնել և նոյն իսկ մերժել այն պէրաթները զորս ուղած էր Պուլկարի և որք խոստացուած էին։

Պուլկարիա եւս կը թուի թաղու իր չէզոք գիւքը։ Կ. Պոլսոյ պուլկարական գործակատար Պ. Մարքովի պաշտօն յանձնուեր է եղեր բացատրութիւններ ուղել Դուռէն ի մասին Պուլկարիոյ սահմանազրկութիւններուն վրայ հաւաքուած օսմ. ուժերուն։

Լու Բարքի հետեւեալը կը գրէ. «Պուլկարիոյ ընթացքը առեկառած մըն է որ կը զբաղեցնէ բոլոր գիւտագիտական շրջանակները։ Իշխանապետութիւնը անշուկ ձեռնարկած է զօրահանութեան. 95,000 պահեստի զօրքեր գրօշի ներքեւ կանչուեր են չէ թէ կանոնաւոր հրամանագրով կամ հանրային ծանուցումներով, այլ թաքուն հրահանգներով զոր գաւառապետները ուղղած են թաղապետութեանց պետներուն։

«Այժմ Պուլկարիա ունի ութը ամբողջ զօրաբաժին զէնքի տակ և երբ Դուռն հարցուց Սոփիա թէ ի՞նչ էր Պուլկար կառավարութեան դիտումը, Պ. Սթոյլով պատասխանեց թէ Դուռը ընտել կաս-

կածելու չէր, վասն զի ինքիւրը մեծ ապագաութիւններու վրայ էր:

«Սակայն Պոլսոյ մէջ հաւատարմութիւնը այս պատճառով Մալխուսի խորթը յօդուած մը հրատարակեալ է որով կը հրաւիրէ Պոլսեցիները ինքեան չձգել այն իմաստութիւնը զոր Բոլնաստանի օրինակը իրեն սորվեցուցած ըլլալու է, վասն զի իշխանապետութիւնը պէտք է գիտնայ թէ ինչն էր կրնայ ընել կայս. կառավարութիւնը»:

Կ. Պոլսէն կը հեռագրեն Սթամբուլի թէ Պոլսեցի սահմանադիրի օամ: ուժեղութիւն վրայ 40 վաշտ տեղեցած է»:

Այս լուրերը կապուցուցանեն թէ քաղաքական հորիզոնը տակաւին լեցուն է փոթորկալից ամպերով:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսի, 6 Յունիս

Մի զարմանաք հիմէ ձեզ ըսեմ թէ քիչ շատ հարեւոր լուր մը չունիմ տալու: Պաշտօնական շըրջանակներու մէջ արդարեւ կոչումներէ և հրաժարումէ, ժողովներու երկու խորհրդակցութիւններէ և օգտակար որոշումներէ անդին բան մը չիկայ: Որոշումներու կատարեալ գործադրութիւնը սակայն ընդհանրապէս զփութութեանց կը հանգիստի և հետեւաբար անոնցմէ սպասուած օգուտները անիրականալի կը մնան, մինչդեռ միւս կողմէ՝ ելմտական, քաղաքական և այլ նկատուածներով կաշկանդուած մեր կեդրոնական վարչութիւնը արդէն անկարող է տոլ այնպիսի որոշումներ, որոնք ազգին արդի ընդարձակ պէտքերուն լիովին զոհացում տալու և անոր վերջերուն սպեղանի մը ըլլալու ծառայէին:

Աւելի քան երբեք հիմա ամէն ոք կը զգայ ստուգութիւնն այն խօսքին, որով թուրք երեսելի պետական մարդ մը, Ալի բաշա, երբեմն մեր սահմանադրութիւնը նմանցուցած էր քառակուսի անիւի մը: Արգարեւ մեր վարչական աշխիւր, որուն կանոնաւոր հարկման ամէնէն աւելի այժմ պէտք ունի, գրեթէ շարունակ արգելքի կը հանգիստի հակառակ զինք դարձնելու համար եղած ջանքերուն:

Այս արգելքները կը ծագին դրամի չգոյութենէ, Գրան ամենափոքր կասկած մը տալու վախէն, որ պաշարած է Պատրիարքարանը, և վարչական ամէն որոշում գործադրելու համար հարկաւոր իշխանութեան և ազգեցութեան պակասութենէն:

Պաշտօնեաները չեն այնքան յանցաւոր, որքան գրութիւնը:

Գաւառներէ հասած լուրերէ, որոնք ամենքն ալ հայ ժողովրդին թշուառութեան արծաղանք կուտան, կարելի է երկու բան եզրակացնել, որոնք միեւնոյն արտաբերուած են:

Դեռութիւն ունին. Հայերու գէմ հալածանքը դադարած է ամենուրեք և մինչեւ իսկ տեղ տեղ իսլամ տարրը քաղցրութեամբ կը վարուի Հայուն հետ, առանց ստիպելու. նոր օգնչու ու է կերպով. անշուշտ ասկէ զրկուած հրահանգներու արգելք է այս, որ ժողովրդին քիչ մը շունչ առնել կուտայ այս կողմէ, և իրեն ժամանակ կը ձգէ իր վիճակին վրայ մտածելու և գտնէ իր թշուառութիւնը ողբալու, եթէ ուրիշ բան չի ալ չկարենայ ընել:

Միւս մեթոտ իսկան երեսելի թէ այն հիմնալի տոկոսութիւնն է, որ յայտնապէս կը տնտեսի մեր ազգին վրայ իր այս վերջին սոսկալի աղէտներու ժամանակ: Պատառ մը հացի կարօտ և մերկ գաւառացի Հայը կարծես աւելի ազնուացիր է. իր դժբաղդութեամբ տեսակ մը յափշտակութեան մէջ ինկէր է որ զինք անգլայ դարձուցած կեանքի նիւթական չարանքներուն՝ կը մղէ հոգեով փառելու իր ազգութեան և եկեղեցիին. իսլամները թէեւ չեն հաւատարմութիւն, սակայն չեն ալ դադարի Հայերը կրօնափոխութեան հրաւիրելէ, շատ անգամ ապագայ դեռակեաց կեանքի մը հրապուրիչ պատկերը նկարելով անօթիին աչքին առջև: Իսլամացիներ ջանքերը կը լլան մանաւանդ այն տեղերը, ուր կոտորածները ամէնէն ահաւելի և վայրագ կերպով կատարուեցան և ուր հետեւապէս ամէնէն մեծ թշուառութիւնը կը տիրէ. և մտածեցէք որ այդ ջանքերը, ամենքն ալ, զրեթէ բացարձակապէս ապարդիւն մնացած են ցարդ. ոչ մի անօթի, ոչ մի մերկ հայ յօթարեցաւ իսլամութիւնը ընդգրկելով մի անգամ ընդ միշտ աղատել թշուառութենէ ինքզինք և իրենները:

Աւելի զարմանալին կայ. գաւառացի հայ ժողովուրդը և գլխաւորապէս որբերը միեւնոյն ցեղային յանուարութիւնը և կրաւորական ընդգրկմութիւնը ցոյց կուտան այն ուղղակի և անուղղակի հրաւերներուն հանդէպ, որոցմով նըպաստ բաշխող կամ որբանոցներ վարող միսիօնարներու մէջ մասը կը ձգտի իր կրօնակիցներու թիւը աւելցնելու Հայաստանի մէջ:

Այս երեսելի, զոր կատարելապէս գնահատելու համար պէտք է ճիշդ, որոշ գաղափար մը ունենալ հայ ժողովրդին մէջ հիմա տիրող կարօտութեան վրայ, սկըսած է արդէն Եւրոպացուց ուշադրութիւնը դրաւել:

ՃԱՅԵՐՆ Ի ՊԱՐՍՊԱՍՏԱՆ

Թաւրիշ, Մայիսի 11

Անցեալ շաբաթ ուստաց հիւպատոս Պ. Պետրովը փող բաժանեց թայմուտած տների տէրերին, որպէս զի իրանց փճացած ապրանքի

փոխարէն նորը գնեն. նոյնպէս փող տուին նրանց, որոնց ժամանցոյցը, մատանին, արծաթէ գօտին տարել էին փողոցում՝ կամ շուկայում: Պարսիկները սաստիկ զայրացել են, թէ ինչու էմիր-Նիզամը համաձայնել է ուստաց հիւպատոսի հետ, տէրութիւնից փող է պահանջել և յանձնել Պ. Պետրովին: Անցեալ շաբաթ շաբաթի օրը ուստաց հիւպատոսարանի դրանը մի թուղթ էին կպցրել պարսիկները, որով յայտնուած էին հիւպատոսին, թէ զգուշացիր, Հայերին այդչափ մի օգնիր, թէ չէ քիչ էլ մի գիշեր կապաններ անկախումը: Դառանները թուղթը պոկում են և ներկայացնում հիւպատոսին, իսկ վերջինս այս թուղթը էմիրին է ուղարկում: Պարսիկներուն մէջ խօսուած է թէ «Մուհառէմին» (պարսիկների սգի օրերը) խառնակութիւն պիտի լինի. դրա համար էմիրը մի նամակ էր գրել տեղապահ հօրը, որպէս զի Հայերին յայտնէ թէ սղի օրերում տնից դուրս չգան. եթէ մէկին վիրաւորեն կամ սպանեն տէրութիւնը պատասխանատու չէ: Հայր Սաադեանը ստանալով այս նամակը յայտարարեց նոյնութեամբ հայերին և իրան կողմից աւելացրեց, թէ զբօսանքի չգնան ոչ մի այգի, նոյնպէս Ս. Սատուածանի այգին, որ գտնվում է հայոց թաղերից դուրս, միայն աղօթելու կարող են գնալ և շուտով վերադառնալ: Երկուշաբթի օրը, ամսոյ 6ին, մի խռովութիւն եւս եղաւ—Երկուշաբթի գիշեր մի հայ գինեւաճառ սպանեցին (որը առաջ ոսկերիչ էր, յետոյ թողել էր իր նոյնիկն արհեստը և գինեւաճառութեամբ էր պարապում), որի պատճառը այս է:

Սրա կինը մի քանի ամիս առաջ մեռաւ (մի օր պարսիկները երբ եկել էին խմելու, Միքտիչը՝ այս է գինեւաճառի տնունը, տանը չէր. պարսիկները կնոջ վրայ են թափվում և նրա բռնաբարում են, որից վախենում է կինը և մեռնում, թողնելով մի դուստր, մօտ 10 տարեկան: Մի րոտիչը կամենում էր մի երկրորդ կին առնել և երեքշաբթի գիշեր պիտի նշան դնէր, բայց գաւառանները նրա կեանքին շուտով վերջ դրին: Իւր 2 պարսիկ ծառաները նրան քնած ժամանակ սպաննում են, որովհետեւ բաւականին կարողութիւն ունէր, երբ դաշտը ուղել են դնել կոկորդին նա դարձնում է և գիւմարում, բայց մի անգէն մարդ ինչ պիտի անի 2 զինուածի գէմ, անգութները նրա ամբողջ մարմինը դաշտում ծածկում են, յետոյ տունը կողոպտում են և փախչում: Երեքշաբթի օրը ձախը տարածուեց երեկոյեան ժամը 4ին. շուտով իմաց տուին կառավարու թեան, ոստիկանները իրանց աչքերով տեսան և յայտնեցին թաղապետին: Վաճառականները իս-

կոյն խառնութիւնը փակեցին և եկան տուն: Այդ օրը բռնեցին սպանողներից մէկին. բայց ուստաց հիւպատոսը բաւարարութիւն է պահանջում: Հետեւեալ օրը 2 հայ բռնեցին, որպէս զի այդ սպանման հետքը վերցնեն, բայց շնորհիւ վաճառականապետ Պ. Սարգիս Բոլնասեանցի աղատուեցան: Երէկ մարդիկ ուղարկեցին գիւղերը, որ միւս ընկերին էլ բերեն (սպանողի). յուսով ենք որ շուտով կը բերեն:

(Արձագանք)

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԵ

Բ Ր Օ Թ Է Ս Թ

Եունան հիւքիւմէթի Աթինաստ պուլընան էլչիլէրէ պիր բրօթէսթ թագաւորի իլէ, Էթի օրտուկեալ պէյնիւտէ միւթարէքէ իչիւն թային օլընան հուտուտը թիւրքլէրին թէճավիզ իթմիշ օլմասընա վէ թէսալիատա դասպ վէ սոյկունլար վուգու պուլմասընա վէ ֆէվգէլատէ ասքէրլէր թէճէմիւ օլընմասընա վէ թէսալիանըն թիւրքիայա գալմասը հագգընտա էհալիյէ ճէպրէն մահսէրլէր վէ իսթիտալար իմպալաթմալարընա գարչը շէտիտէն բրօթէսթ իթմիշ օլտըղը Աթինաստան քէչիտէ օլընան պիր թէլէկրաֆ պիւտիւրմիշ տիր:

Գ Օ Ն Ֆ Է Բ Ա Ն Ս

Սթանպուլ էլչիլէրի ճուճաթթէսի կիւնիւ պէյնիլէրինտէ պիր մէճլիս իթտիքտէն սօնրայ, մուսալէհէ իչիւն ալթընճը գօնֆէրանսը եինէ թօրհանէտէ թէլքիլ իթտիլէր: Աթան Բօմէկին պէյյանընա կէօրէ, պու իճթիմալար սէմէրէպալիշ սուրէթտէ ճէրէյան իթմէքտէ իմիշ:

Եունան հիւքիւմէթի իսէ՝ միւս զէքքէրաթլըն բէք ուզուլն սիւրմէսինտէն տօլայը թէլքէքթի իտիւպ, 70,000 ասքէր սիւրալ ալթընտայ թուլմագ վէ աճ վէ չըպլագ՝ Եունանիսթանա իլթիւսա իտէն 100,000 թէսալիա մուհաճիլլէրի կէլինտիլմէք իչիւն Եունանիսթալանըն գուլվէլի մասիլլէսի ուզուլն միւտտէթ թէհամիւլ իտէմէլէճէկինի պիլտիլէրէք, միւսալէհէ շէրաթիլինին կիւն էվվէլ թահթը գալուրա ալընմասըն տէվլէթլէրտէն իսթիւրհամ իթմիշ տիր:

Սթանպուլտան քէչիտէ օլընան պիր թէլէկրաֆ՝ միւզէքքէրաթլըն պու դատար ուզուլն սիւրմէսինէ սէպէպ թիւրքլէրի կէսալթէքտէտէ տիր. զիրա թէվֆիդ բաշս գօնֆէրանտա օլընան միւզէքքէրաթլըն Եւրտըղա պիլտիլիպ, հէր պիր գարար իչիւն թալիմաթ ալմայա մէճպուր պուլընտըղընտան միւզէքքէրէ նէթիճէլլէրի պիր մէճ-

լիստէն տիկերինէ ախարապատ
վէ պու հովէ հաթիթալար կէշմէք-
տէ իմիշ :

ԿԻՐԻՏ ԹԵՍԱԼԻԱՅԱ ՊԵՏԵԼ

Սթանպոլըն մէհաֆիլի սիյասի-
լէսինտէ զանն օլընտըլընա կէօրէ,
Գապը Ալի՝ Թէսալիայա պէտէլ
կիրիտի Եունանիսթանա թէքք
իթմէք թէքլիֆինտէ պուլընաճազ
իմիշ վէ էկէր Եունան հիւքիւմէ-
թի պու թէքլիֆի գապուլ իտէր
իսէ Պապը Ալի թալմինաթը
հարպիլէի տախի իսթէմէյէճէք
իմիշ : Մէսէյէնին կիւն էվլէլ հա-
լը իշիւն պու թէտպիլը բէք չօգ-
լարը թարաֆընտան պէկէնիլիշ
իսէտէ, Էվրոբա տէվլէթլէրին
պուլնա բազը օլմոյաճազլարը ա-
շիքէար տըր :

ՀԱՐԵՔԵԱԹԸ ԱՍՔԵՐԻՅԷ

Թիւրքիանըն էլան գուվէի
ֆէվզէլատէի տաքէրլէյէ թէճէմիւ-
իթմէքտէ օլմալը իւզէրինէ, տէվ-
լէթլէր Պապը Ալիտէն իյզահաթ
իսթէմիշլէր իտի : Խարիճիյէ նա-
զըրը թէվֆիգ բաշա ճէվապէն
տէմիշ տիքի, Մալլէր թիւֆէնք-
լէրին իսթիւալը իշիւն բէտիֆ վէ
մուսթահաֆըլ տաքէրլէրէ թա-
լիւ իթիւրմէքտէյիլ : Ղերաշիւ-
տիյէ գաւար օսմանըլ տաքէրլէրի
հանրի Մարթինի իսթիւալ իթ-
մէքտէ իտիլէր :

Թէվֆիգ բաշանըն պու հօլտա
բէք սատէճէ վէրտիկի ճէվապ հիշ
քիմսէի գանտըրաճաճըլ տըր : Ղի-
րա թիւֆէնի թալիմի իշիւն աա-
քէրլէրի պիւր գաշ հիւզ քիլմէթ-
րօ ուզապտա պուլընան ջանապ-
գալէ ճէվալընա վէ Բուսիա վէ
Պուլկարիա սինօլարընա գաւար
կէտնտէրմէք իգլիլա իթմէլ իտի-
վէ բէնտի պուլընտըլարը մահալ-
լէրտէ թալիմ իտէպիլիլէր իտի :

Կ Ի Ր Ի Տ

Գանհա սանճաղընտան ինթի-
խապ օլընտան կիրիտի տաքէրլըն
բէյիլէրի՝ Ազրօթիլիտէ վէ հա-
լօտ Արօզօրօնտա թէշքիլ օլը-
նաճազ մէճիլի ումուլի հազըլն-
տա տիկէր գաղալարըն մէպուս-
լարը իլէ տախի մահալլէրինտէ
իսթիլլարէ իթմէք մագսէտի իլէ
գաղալարը կէզմէք իշիւն՝ Էվրոբա
զըրհըլարը գոմանտանլարընտան
մէզուլիլէթ իսթէմիշլէր :

Քէզապու հօլըլըլարընտա պիւր
վուգուլաթ զուհուրինտէ էմին օլ-
մագ Էվիլին սիւհալարը իլէ պիւր
էճնէպի վարօրա բազիպլէ՝ իսթէ-
տիքլէրի մահալլէրէ կիտէպիլմէլէրի
իշիւն գոմանտանլարտան պիւր վա-
բօր իսթէմիշլէր : պու թէքլիֆ-
լէրի տախի գապուլ օլընմըլ տըր :

Աթինա տան Բօլիսիլէ Գօրէսթըն-
տէնցէ պիլտիլիլիլէրինէ կէօրէ կի-
րիտ տաքէրլըն : Բէյիլէրի տէօվ-

լէթլէրէ պիւր պէյաննաճէ վէրմէք
նիլէթիլիտէ պուլընտաքազ, կիրիտ
իշիւն օլընտան օթօնօթիլի պէրաի
թէճէրիպէ գապուլ իթմէյէ հալը-
նըլ շու շարթիլար իլէ մէհալար
պուլընտազլարըն պիլտիլէճէք-
լէր իմիշ, հանի մուգաւտտէմա
թիւրք տաքէրլէրինին տաւտան
չըգմալարը վէ կիրիտ իշիւն թալիլ
օլընաճազ բրէնս տաւտան մէճիլը
ումուլի միլլիսի թարաֆընտան
ինթիլիտապ օլընմալար :

Ի Ր Ք Ա Ր

Իշպո - Յունիս տըլն նիհայէ-
թինէ գաւար պալմէլէրիլիլտէն
հէր քիմ կալէթա պէտէլինի էօ-
տէմէմիշ օլուր իսէ բօթմահանէ
մարիֆէթի իլէ տնլէրտէն թահալ
իթմէկէ մէհալար օլնաճաղըմըլ
չիմոթիտէն իլիթար իտէրիլ :

ԱՂԻՍԱՆԱՆԱՐ ԸՆԵՐՈՒԹԻՒՆ

Վարդապետ մէսթըն Մուհամմադ
մէլլէթտաշարըմըլտան էն ֆաղիւր
օլան 100 ֆաթիլիտանըն էսամիսի
Աղբաւտալիտա՝ Ընկերութիւնա ի-
հալէ օլընմըլ օլուր, տնլարըն
պիւր այ գաւար թէսիլլը իշիւն
իգլիլա կէօրիլէն նաֆազա մէլ-
քիւր Ընկերութիւն թարաֆըն-
տան միւհալմէյիլէ թէվլիլ օլընա-
ճազ տըր :

Էվլէթի նուսիլէմիլտէ պէյան
իթմիշ օլտըլըմըլ իւզլէ պալը
վէվաթը միլթէպլէրէ թարաֆըն-
տան պու պապտա իտնէ թէճէմ-
միւսինէ տէվաճ օլընմագտա տըր :

ՊՈՒ ԿԻՒՆՔԻ ԹԵԼԵԿՐԱՖԻԱՐ

(Սթանլի Պալլադիք)

Սթանպոլ, 9 յունիս
Պու կիւն ալթընը գօնֆէրան-
տա վուգու պուլան միւղաքէրաթ
էյի նէթիլմէյէ վասըլ օլտը :

Ասիլէն գաւարիլի օլան սինօր
մէսէլէսի Պապը Ալիտէն տախի
գապուլ օլընաճաղը պէլլէնմէք-
տէ տիւր : պու սինօր Մեյիլլայա
գաւար ուզանմագտա օլուր թիւրք-
լէրէ հալընըլ պալը մուհալէպէ
մէվլըլէրի թէքք իթմէպտէ իսէ-
տէ մէլքիւր մահալլէրտէ Բուցուլ-
չալիօ քէօյիլնտէն մատէ մէսթիւն
պիւր մահալ հօզ տըր : Մէհաֆիլը
սիւսիլէտէ կէզէն զաննիլաթա
կէօրէ հաղընէն միւսալէհէ գա-
ւարիլի օլաճազ տըր : Թիւրքլէ-
րին թէսալիտան չըգմալարընտա
միւլքիլաթա թէսալիլ օլընա-
ճաղընտան գօրգուլմագտա տըր :

Աթինա, 9 Յունիս

Ալընտան մալիլմաթլարա կէօրէ
թալմինաթը հարպիլէ թալիլ իթ-
մէք իշիւն Սթանպոլտա թէշքիլ
օլընտան գօմիսիլի տիլիտէքի գա-
լարը վէրմիշ տիւր :

1897 մուհալէպէսինտէ թիւսա-
լիտա օլան մէսալիլաթը հար-
պիլէ 73 միլլիոն ֆրանկա պուլիլ
օլմըլ տըր : Գաղապար վէ մուհա-
ճիլլէր իշիւն 39 միլլիոն ֆրանկ
մէսալիլի հիսապ օլընմըլ : Եու-
նան հիւքիւմէթին 1897 տէնէսինին
վարիտաթը 65 միլլիոն օլտըլը
հալտէ մէսալիլաթը 135 միլլիոն
օլմըլ տըր : Ալըլ գալան 40 միլ-
լիոն տալիլի պիւր իսթիլլար իլէ
գաւանաճազ տըր : քէզա թիւսա-
լիտալը հէնիտէն իսլահ իթմէք ի-
շիւն 10 միլլիոն պիւր մէպալ տա-
լիլ գալմ օլընմագտ էլլէմ տիւր :
Եունան հիւքիւմէթի շու աշիւլը
հաղըրէսինի տէօվլէթլէրէ պէյան
իլէ քէնտիլիլին պիւր ուֆազ հիւ-
քիւմէթ օլտըլընը նաղարը տըր-
գալմա ալարաթ թալմինաթը հար-
պիլլէյէ պիւր թալաֆ իթմէլէրինի
թէքլիֆ իթմիշ տիւր : վէ պու թէք-
լիֆի թալալիլ իթմէք իշիւն մու-
հալէպէյէ թիւրքիլանըն սէպէ-
պիլլէթ վէրմիշ օլտըլընը վէ մու-
հալէպէտէն էվլէլ Ռուսիա խա-
րիճիլէ նաղըրը քնիլ Մուրալիլէ-
ֆին նօթալընը զիքի իտուպ, մու-
հալէպէտէ գաֆէրիտա օլան հէր
հանկը թարաֆ օլուր իսէ օլտուն
մատտէն իսթիլլատէ իտէմէլէլիլինի
տէր խաթըր իթիլլարմիշ տիւր :

Լոնտոն, 9 Յունիս

Քրալիլա՝ Պրէնկէմ սէրալըն-
տա բրէնպէրի վէ հիւսիլլէրի վէ
ալտէր տէօվլէթլէրտէն կէլէն մու-
րալիտալարը գապուլ իթաի :

Վիէննա, 8 յունիս

Բօլիսիլէ Գօրէսթընտէնցիլ Սէ-
լանիլտէն ալտըլը հալալտիսէ
կէօրէ, Սուլթան հաղընէն պիւր
իրատէ չըգաւաճազ վէ մէլքիւր
իրատէ իլէ Թիւրքիտա Բուսիա
միլլէթի պուլընաղը բէսմէն թա-
նըլաճազ վէ Մաքէտոնիտա
պուլընտան Գուցուլա հալմընա
միլիտա իքի տէսալթ թալիլ
իտէճէք իմիշ :

Գանհա, 9 յունիս

Պիւր բուս վարօրընը հիւքլէթ-
մէքտէ օլան էհալիլ իւզէրինէ ա-
սըլար հիւքիւմ իթիլլէր : Հիւ-
րալէթիւն էհալիլ տալիլ մուգա-
վէմէթ տէվաճ իթմէքտէ տիւր ի-
թալիա զըրհըլը իքի տէֆա գա-
սապա իւզէրինէ ալթէլ իթաի :

Քէօն, 9 յունիս

Քէօնիլէ Ջալիլալըն Լոնտոն-
տան ալտըլը հալալտիսէ կէօրէ
Աթինա պուլընտան ինկիլիլ
էլիսինին վէրտիկի բարօրթ իւ-
զէրինէ՝ Սուլալըրի թիւրքլէրին
թէսալիլալը պօշաթմոյա պալա-
մըլ օլտըլարընը պէյան իթմիշ
տիւր :

Վիէննա, 9 Յունիս

Պուլկարիա բրէնի վէ բրէնսէսի,
վէ բրէնսէս Գլէմանթիլն պու ոա-
պահ պուլարալա եթիլիլլէրի Բրէնս
Ֆէրտինանտ վէ բրէնսէս Մարիա
Լուիլա պու աղալմ Լոնտոնալ միւ-
լէվէճէլէն հարէքլէթ իթիլլէր :

ԶԱՍԻՐԷ ԲԻԱՑԱՍԻՐ

Վաւան 11 Յունիս

Պալլադիք

Վալիօն, 56-58 յալլալ հէլիթի,
9,40-9,90 ֆրանկ

Ալտալա, 57-61 յալլալ, հէլթիլթի,
9,40-10,40 ֆրանկ

Ալրա

44-46 յալլալ, հէլթիլթի, 5-5,20

Մարալ պաղապար

Հէլթիլթի 4,80-4,90 ֆրանկ,
Նարօլէն 20,60 ֆռ. հիսապ իլէ
կիւնտէ 4-5 արապա պուլընտալ
ինմէքտէ տիւր :

ՏՕՐՓ. Ե. ԹՈՂՄԱՍՆԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հա-
սարկուլիտան թէ վերադարձա՞ծ է
Սոֆիաէ եւ կընդունի հիւանդներ ա-
մեն օր իր տունը ի Պալլաք Բապար,
առաւօտները ժամը 10էն 12, իսկ կէս
օրէն վերջը 2էն 5 : Զորքալարի օրերը
կէս օրէն վերջը ձրապէս կը դարձա-
նէ : 2-10

ՏԻԿԻՆ ԹԸՆԿԻՐ

Բ. Թալի. քիւ 822 (Տիպէկ չէլմիլի
յիւնալի փոլոյց)

Պիւրազոյն մէթոտով կը սորվեց-
նէ ձեւագիտութիւն եւ յանձն կառ-
նէ տսկի աշխատութիւններ չա-
փաւոր գրիւնով :

Ա Զ Դ

Իրաւունք կը վաճառուի նաեւ Օթէլ
Բօմբարիլի ներքեւ, Տ. Սանտալիտանի
ծխախոտի վաճառատան մէջ, ինչպէս
նաեւ Մուսալլաի հրապարակին վրայ -
Տ. Միլլիսի սրճարանին կից, հայ
ծխախոտ—սրճախոտի խանութին
մէջ, նաեւ Մուսալլա Ապուլիտանի
միլլիթի դէմ Պ. Աւետիս Զարհան-
լիտան ծխախոտ—թղթախոտի խա-
նութը :

Փափաքողը կրնան ամեն տուն թերթ
գտնել այս երեք տեղերը :

Ա Զ Դ

Վաւանի, Ռուստուգի եւ չըլալալ
քաղաքաց մէջ առեւտրական հրա-
պարակի ծանօթ եւ առաջնակարգ վա-
ճառատանց մէջ պաշտօն վարած երի-
տասարգ մը՝ որ այս երկրի մէջ պէտք
եղած լեզուական հմտութիւնը ունի,
կը փափագի պաշտօն ստանձնել վաճա-
ռատան մը մէջ չափաւոր վարձատրու-
թեամբ :

Դիմել Իրաւունքի խմբագրութեան :

Ա Զ Դ

“ԻՐԱՆՈՒՆՔ”-ի վարչութիւնը
յաճօն կառնու պատրաստել հա-
յերէն, Պուլկարիլէն, Յունաերէն
եւ Յունարէն լեզուներով ընկա-
լալըր, հասցէներ, նամակադուլ-
ներ, մահազներ, յայտարարու-
թիւններ, հարսանեաց եւ այլ հրա-
ւերագրեր, այցաքարտեր եւ, են :

Գնել չափաւոր

Փափաքողը պարտին դիմել խմ-
բագրութեան հասցէին :